

Գեղեցկուհի կովի մասին

հեղինակ՝ Դոնալդ Բիսեթ

թարգմանիչ՝ Կարեն Ա. Սիմոնյան

Եղել է, չի եղել, մի կով է եղել: Անունն էլ՝ Գեղեցկուհի: Նա, իսկապես, երկար ու սև թարթիչներով գեղեցկուհի էր:

Գեղեցկուհին արածում էր այն մարգագետնում, որտեղ ուղտափուշ էր աճում: Շաաա՛տ ուղտափուշ: Բայց Գեղեցկուհին ուղտափուշ չէր սիրում:

Երեկոները, երբ մութն ընկնում էր, նա այլևս խոտ չէր արածում, այլ նայում էր, թե ինչպես են իրար ետեից երկնքում վառվում աստղերը: Երբեմն նա տխուր բառաչում էր, որովհետև ոչ ոք չկար, որ հետը խաղար:

Մի անգամ Գեղեցկուհին նույնիսկ մի երգ հորինեց.

Վառվիր աստղ, եւ փայլիր,
Մութ երկնքում դու թարթիր,
Ընկեր գտիր, որ խաղամ,
Եվ հետը խոտ որոճամ:

Ը՛մնո՛ւտ՛ւտ՛ւտ՛ւ...

Եվ աստղն էլ նրան այսպես պատասխանեց.

Իմ խորհուրդը դու լսիր,
Պառկիր, պառկիր ու քնիր,
Ի՛նչ ես բարձր բառաչում:
Բառաչում ես՝ ձանձրացնում,
Բայց թե որ շատ ես ուզում,
Մութ երկնքում կշրջեմ
Եվ քեզ ընկեր կգտնեմ:

Պատահաբար այս զրույցը լսեց Լուսնի վրայի մարդը: Նա աստղին ասաց, որ անհանգստանալու հարկ չկա, որ հենց ինքն էլ կօգնի Գեղեցկուհուն՝ մի ընկերուհի գտնել: Եվ վերցնելով դույլը, բահը, երկաթե սկուտեղն ու մագնիսը, նա առանց երկարաբարակ մտածելու Լուսնից ցած թռավ Երկրի վրա: Իսկ չմոլորվելու համար

Լուսնի ճառագայթն ուղղեց դեպի այն մարգագետինը, որտեղ արածում էր Գեղեցկուհին:

Վայրէջք կատարելով, նա առաջին հերթին բահով քանդեց հավաքեց ուղտափշերը, լցրեց դուլի մեջ ու տարավ հեռու՝ թափելու: Բայց դեռ մնում էր ամենագլխավոր գործը՝ ընկերուհի գտնել Գեղեցկուհու համար: Հանկարծ նա լսեց, որ քիչ հեռվում ինչոր մեկը փնչացնում է:

Ագաթա խխունջ էր. նա մի կարեւոր տեղ էր շտապում:

Գեղեցկուհին էլ տեսավ խխունջին: Շատ ուրախացավ ու լիզեց խխունջի գլուխը:

— Օգնեցե՛ք,— գոչեց Ագաթան:

Լուսնի մարդն ու Գեղեցկուհին ուզեցին օգնել, բայց խխունջի հետքն էլ չէր մնացել:

— Օգնեցե՛ք,— չգիտես որտեղից, բայց հավանաբար, կովի բերանից հազիվ լսվեց խխունջի ձայնը:

Կովը բերանը բացեց, եւ իսկապես, այնտեղից դուրս սողաց Ագաթա խխունջը:

— Դու կարող ես նորից ինձ լիզել, միայն թե՛՝ զգույշ,— ասաց խխունջը:

Գեղեցկուհին մի քիչ անհարմար զգալով, նորից, բայց այս անգամ շատ զգույշ, լիզեց խխունջի խեցին:

— Ի՛նչ լավ է,— ասաց Լուսնի մարդը:— Հիմա դու ընկերուհի ունես, եւ ես հանգիստ խղճով կարող եմ տուն վերադառնալ: Քո կողմից էլ կբարեւեմ աստղին: Բոլոր ուղտափշերը արմատախիլ եմ արել եւ նետել եմ, իսկ դույլ ու բահը նվիրում եմ քեզ: Կարող ես դրանցով խաղալ որքան սիրտդ ուզի: Ցտեսություն, իմ Գեղեցկուհի:

Եվ այս խոսքի վրա Լուսնի մարդը ցատկեց անցավ կովի վրայով:

— Հիմա իմ մասին էլ երգ կհորինես,— գոչեց նա:

Հավանաբար, նա հիշեց այն կովի մասին հորինված երգը, որը ցատկել էր Լուսնի վրայով:

Հետո նստեց երկաթե սկուտեղին ու վեր նետեց մագնիսը: Մագնիսը իր ետեւից քաշեց սկուտեղը: Եվ այսպես, մարդը հասավ մինչեւ Լուսին. որսում էր մագնիսը ու վեր նետում, իսկ մագնիսն էլ դեպի իրեն էր քաշում երկաթե սկուտեղը:

Երբ աստղը իմացավ, որ Գեղեցկուհին ընկերուհի է գտել, շատ ուրախացավ եւ սկսեց ավելի պայծառ փայլել: Լուսինը՝ նույնպես: